ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ «ԵՎՐԱՍԻԱ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

08.02.2023 17:40

Կարևորելով փաստաբանական ինստիտուտի դերը և նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում՝ «Եվրասիա» ավագ դպրոցի հումանիտար հոսքի «Իրավագիտություն» ենթահոսքի աշակերտները ճանաչողական այցով հյուրընկալվել էին ՀՀ փաստաբանների պալատում:

Աշակերտներին ողջունել է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Աշակերտների հետ զրույցում Պալատի աշխատակազմի ղեկավարը ներկայացրել է փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև՝ պատասխանել այցելուներին հետաքրքրող հարցերին:

Ճանաչողական այցի շրջանակներում Լուսինե Սարգսյանի ուղեկցությամբ աշակերտները շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքի տարածքում, ծանոթացել աշխատանքային ընթացքին, փաստաբանների պալատի գործառույթներին ու կառուցվածքին:

Այնուհետև աշակերտներն այցելել են Փաստաբանական ակադեմիա:

Նրանց ողջունել և հյուրընկալել են Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը և գիտագործնական գծով պրոռեկտոր Մանե Կարապետյանը:

Փաստաբանական ակադեմիայի ռեկտորն աշակերտներին ներկայացրել է Փաստաբանական ակադեմիայի դերն ու կարևորությունը, փաստաբան դառնալու ընթացակարգը և պայմանները, ապա՝ հաջողություն մաղթել փաստաբան դառնալու ցանկություն ունեցող ապագա իրավաբաններին:

Աշակերտները ճանաչողական այցն ամփոփել են Հանրային պաշտպանի գրասենյակում:

Այստեղ նրանց ողջունել է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ Թամարա Բաղդասարյանը: Նա ներկայացրել է հանրային պաշտպանների կարևորությունը և անմիջականորեն ծանոթացրել հանրային պաշտպանների աշխատանքային պայմաններին:

Հանդիպման ավարտին աշակերտները կիսվել են տպավորություններով և շնորհակալություն հայտնել ընդունելության համար:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })